

10 հունիսի 2020թ.

Թիվ 01/1- 144

Հաշվետվություն 02

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ
Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական
փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 29 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝



Հակոբ Անդրեասյան



Տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերանվանվել ու վերակազմավորվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության :

Այդ կապակցությամբ փոփոխվել է Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը և անվանական արժեքը՝ նախկին 2500 հատ, 12 000 000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարեն Բանկի կանոնադրական հիմնադրամն այժմ բաղկացած է 5,000,000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 6000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կից ներկայացվում է փոխված կանոնադրությունն ամբողջությամբ, Բանկի գրանցման վկայականը և լիցենզիան:

Համապատասխան փոփոխությունները տեղադրված են նաև Բանկի տնային կայք էջում:

Տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ՀՀ, ք. Երևան, Ծարավ Աղբյուրի փողոց 55/15 շենք, 4 շինություն հասցեում գտնվող «Նոր Ավան» մասնաճյուղը 2020թ-ի հուլիսի 1-ից դադարեցրել է իր գործունեությունը: Բանկի «Նոր Ավան» մասնաճյուղի բոլոր գործառույթները կիրականացվեն «Զեյթուն» մասնաճյուղի (հասցե՝ ք. Երևան, Դ. Անհաղթի փողոց 13/5) կողմից: Հարկ ենք համարում նշել, որ մասնաճյուղն ի սկզբանե բացվել էր նոր տեխնոլոգիաների ներդրման, հաճախորդների փորձի ուսումնասիրության և այդ փորձը մյուս մասնաճյուղերում կիրառելու նպատակով, որն արդեն իրականացվել է: Նաև նշենք, որ Բանկը նախատեսում է Ավան համայնքում բացել նոր ունիվերսալ բանկային ծառայություններ մատուցող մասնաճյուղ: